

ԵՂԻԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ ԿԱՐՆԵՑԻ, Թուրքերեն-ճալերեն բառարան, աշխատասիրություն Բ. Լ. Չուգասյանի, ՆՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1986, 176 էջ:

Հայկական դադթօշախներում թարգմանական բառարանների անհրաժեշտությունը մեծապես զգացվել է ուշ միջնադարում: Մերձավոր ու Միջին արևելքի երկրների առևտրական միջավայրում առավելապես գործածական թուրքերեն և պարսկերեն բառերի թարգմանություն կարիքը հանգեցրել է պարսկերեն-հայերեն և թուրքերեն-հայերեն բառարանների ստեղծմանը: Դրանց թվում է XVIII դ. վաճառական, հասարակական գործիչ, գրասեր, բանահավաք Եղիա Կարնեցի Մուշեղյանի «Թուրքերեն-հայերեն բառարանը», որի հրատարակման շնորհակալ գործն իրականացրել է բանասիրական գիտությունների թեկնածու Բ. Չուգասյանը: Արդեն իսկ հրատարակած ունենալով հոգվածներ ինչպես Եղիա Մուշեղյանի վերաբերյալ, այնպես էլ բառարանագրության առնչությամբ, Բ. Չուգասյանը ձեռնամուխ է եղել սույն աշխատասիրությանը իբրև գիտակ, նյութի քաջատեղյակ մասնագետ: Եթե դրան ավելացնենք հրատարակվող բնագրի գիտական կարևորությունը, ապա պարզ կդառնա այն հիմքը, որը թելադրում է դրվատանքով խոսել՝ գրախոսվող գրքի մասին:

Ներկա հրատարակությունը, որը մեզ ընկալելի է դարձնում XVIII դ. հայ առևտրաբանական միջավայրի բառապաշարը և օժանդակում է հայ բառարանագրության պատմության ուսումնասիրմանը, մեծապես կարևոր է նաև մեկ այլ տեսանկյունից. այն նշանակում է ևս մի քայլ՝ պատմության փոշուց փրկելու գրական-պատմական, գիտական-մշակութային արժեքներից մեկի՝ Եղիա Մուշեղյանի դիվանի նյութերը, դիվան, որի նշանակությունը դժվար է գերազանահատել: Սակայն դանդաղ է ընթանում վերջինիս ուսումնասիրությունը, և կասեցնող գործոնների թվում է դիվանի նյութերի մեծ մասի լեզուն՝ օտարաբանություններով հագեցած բարբառային հայերենը: Եղիայի դիվանի շատ վավերագրեր հասկանալու համար քիչ է դիմել թուրքերեն, պարսկերեն, արաբերեն, հունարեն, ֆրանսերեն, իտալերեն և այլ բառարանների. անհրաժեշտ է հենց Եղիա Մուշեղյանի շրջապատին, մթնոլորտին հատուկ բառապաշարը, նրա արտասանական ու իմաստային նրբերանգներն արտացոլող, անձանաչելիորեն աղավաղված բառերը բացատրող բառարան:

Եվ ահա հրապարակի վրա է իր իսկ՝ Եղիա Մուշեղյանի կազմած բառարանը, որը, թող թե մասնակիորեն (դիվանի նյութերի լեզուն, թուրքերենից բացի, լի է նաև արաբերեն, պարսկերեն, եվրոպական ու բարբառային բառերով), սակայն կարող է օգտակար լինել նաև նրա դիվանի ուսումնասիրման համար:

Հրատարակելով Մոսկվայի՝ Ռուսաստանի արտաքին քաղաքականության արխիվի «Ռուսաստանի հարաբերությունները Հայաստանի հետ» ֆոնդում պահվող՝ Եղիա Մուշեղյանի սույն բառարանը, Բ. Չուգասյանը շանդիր աշխատանք է կատարել, օժտելով այն առաջաքանով և «Բառաքնական գիտություններ» բաժնով, որոնցից յուրաքանչյուրը գիտական անխնշ պրպտումների արդյունք է: Դիվանում խառը գրանցված բնագրի թերթերը ի մի բերելով, աշխատասիրողը վերականգնել է բառարանի նախնական կազմը, կոհեղ Մուշեղյանի աշխատանքի ընթացքը բառարանը կազմելիս, փորձելով նաև վերագտնել բառարանի համար օգտագործած աղբյուրները: Իսկ նշել է բառարանի հնչյունական առանձնահատկությունները, կառուցվածքը, հատկանիշները բացատրությունների շարքում հանդիպող անհասկանալի բառերի ժամանակակից իմաստները, իսկ անհրաժեշտության դեպքում՝ միջնադարյան գրավոր հուշարձաններում այս կամ այն բառի գործածման փաստերը, բացատրել և անհրաժեշտության դեպքում ստուգաբանել է մեր բառարաններին անօժանոթ հայերեն և օտար՝ փոխառյալ, անստույգ հիշված կամ սխալ ստուգաբանված, ինչպես նաև որոշ բարբառային բառեր: Գործին մեծապես նպաստել է աշխատասիրողի՝ արևելյան լեզուների և թավրիզահայ բարբառի իմացությունը:

Ծավոք, բառարանի ստեղծման ժամանակը, նպատակն ու պայմանները հիմնականում մնում են անորոշ: Աշխատասիրողի կարծիքով բառարանը գրվել է հավանաբար, 1721—1724 թթ., Եղիա Մուշեղյանի՝ լեզուների ուսումնասիրման շրջանում: Բացառված չէ. բայց ըստ

գիվանի մի շարք հիշատակությունների, Մուշեղյանը լեզունների ուսումնասիրմամբ է զբաղվել դեռևս 1712 թ. սկսած¹։

Եթե ընդունենք, որ բառարանը կազմվել է 1721 թ. հետո, ապա, դեռևս պատանեկան տարիներից լեզունների ուսումնասիրմամբ հրապուրված և «մայրենի լեզվի պես» թուրքերեն իմացող (էջ 17) Եղիան հազիվ թե այդ շրջանում թուրքերենի ուսումնասիրման կարիքն զգար և ա՛յդ նպատակով բառարան կազմեր։ Դա արվել է, ամենայն հավանականությամբ, այլոց օժանդակելու համար՝ հաղթահարելու առևտրական միջավայրի թուրքախոս բառապաշարը։

Բ. Զուգասդյանն իրավացիորեն նշում է, որ նման բառարանի կազմման համար Եղիան «համապատասխան լեզվաբանական դիտելիքներ չի ունեցել» (էջ 20)։ Սակայն այս ասպարեզում դա նրա միակ փորձը չէր, ինչպես ցույց են տալիս Մուշեղյանի գիվանի նյութերը, մեզ են հասել նրա մեկ տասնյակից ավելի բառացանկեր։ Աշխատասիրողն ակնարկում է, որ 1722 թ. ապրիլի 1-ին Ղում քաղաքում «Եղիան սկսում է կազմել հայերենից-պարսկերեն (հայատառ) մի բառացանկ... նման մի բառացանկ էլ նա կազմում է ռուսերեն լեզվի համար 1722 թ. հոկտեմբերին, երբ գտնվում էր Աստրախանում» (էջ 19)։ Սակայն երկու դեպքում էլ թվականն ուղղելի է. վկայակոչված հայերեն-պարսկերեն բառացանկին նախորդում է Եղիայի հետևյալ նշումը. «Սկիզբն եղև Ղում քաղաք, թիւն ՌՃԿԱ (1712) ապրիլի՝ ամսոյ մին օրն ... Ծարսի լեզու գրեմ աստուծով» (ԱՅՔՐ, Ժ. Գ—5, լ. 64)։ Այն մասին, որ այդ շրջանում Եղիան իրոք եղել է Ղումում, վկայում են նրա մի շարք նշումները հաշվեմատյաններում (տե՛ս, օրինակ՝ ԱՅՔՐ, Ժ. Ա—1, լ. 1806)։ Ինչ վերաբերում է հայերեն-ռուսերեն բառացանկին, ապա այն կազմվել է 1711 թ., քանի որ դրան նախորդում է Եղիայի հետևյալ գրառումը. «Աստուծով թիւս ՌՃԿԱ (1711) հոկտեմբերի Դ—Ե (4—5) դարիս եղա Հաշտար-խան. ուսուսի լեզու գրեմ» (ԱՅՔՐ, Ժ. Գ—5, լ. 70a)։ Այդ թվականին Եղիայի՝ Աստրախանում լինելու մասին վկայում են դարձյալ նրա գրառումները հաշվեմատյաններում (տե՛ս ԱՅՔՐ, Ժ. Ա—1, լ. 2306, 2506)։ Իսկ 1722 թ. հոկտեմբերին, Եղիան գտնվում էր Թավրիզում, որի մասին են վկայում նրա դրած նամակները²։

Աշխատության առաջաօտան իրազեկում է նաև Եղիա Մուշեղյանի կյանքի և գործունեության առանցքային դրվագների մասին, որոնք արդեն արժարժված են նախորդ հետազոտողների և իր իսկ՝ աշխատասիրողի, կողմից։ Ցավոք, այս մասը զերծ չէ անճշտություններից, որոնց կարելի է անվանել «թափառող», քանի որ դրանք առկա են նաև այլ ուսումնասիրողների մոտ։ Խոսենք, օրինակ, Եղիայի ծննդյան թվականի մասին։ Հետազոտողները նշում են 1689 թ., աղբյուր ունենալով կա՛մ սխմանց, կա՛մ Մուշեղյանի թողած մի թյուր հիշատակություն։ Սակայն գիվանում առկա է նաև այլ տեղեկություն, որն անկաստ է մնացել. դա «Գիր վասն բժշկութեան դեղորէլից և զանազան իրաց փորձեցելոյ» գրքի առաջին էջին Եղիայի նշումն է՝ «Աշխատող և գրող դրոյս էլիյասոս Մուշեղյանց Աստուածատուրեան, սերեալ գաւառէն Խոտաշրոյ, ցեղիցն Գասպարանց, ծնեալս Կարին քաղաքի յամի տեառն 1688...» (ԱՅՔՐ, Ժ. Ա—4, լ. 3)։ Այս տեղեկության ճշգրտության մեջ դժվար չէ համոզվել, համադրելով հայոց մեծ թվականը քրիստոնեականի հետ Եղիայի նույն այն հիշատակության մեջ, որը դարձել է թյուրիմացության աղբյուր. նա գրում է. «Իմ ծննդեան Եղիեայիս թիւն փրկչին 1689, իսկ հայոց 1137 մայիսի երեսուն...» (ԱՅՔՐ, Ժ. Ա—1, լ. 6106)։ Հայոց 1137 թ. համապատասխանում է փրկչական 1687 հոկտեմբերի 1—1688 սեպտեմբերի 25։ Եղիան ծնվել է մայիսի 30-ին, հետևապես թվականը 1688-ն է։ Առկա է ևս մի խոսուս փաստ. դա Եղիայի կնիքն է, որին դրոշմված է նրա ծննդյան թվականը. Եղիայի ձեռագրի նկարագրության մեջ Լ. Ոսկյանը նշում է, որ կնիքը «չի կարգացուրի ամբողջապէս, միայն 1688» թուականը պայծառ կը տեսնուի» (չկոահելով, սակայն, նշված թվականի իմաստը, Լ. Ոսկյանը փորձում է անուղղակի տվյալների հիման վրա ենթադրություններ անել Մուշեղյանի ծննդյան թվականի մասին)։ Այսպիսով, Եղիա Մուշեղյանը ծնվել է ոչ թե 1689, այլ 1688 թ.։ Առաջարկում առկա են տեղեկություններ, որոնք նույնպես ճշգրտելի են։ Օրինակ. Թավրիզի երկրաշարժի ամսաթիվը էջ 12-ում ապրիլի 27-ն է, էջ 19-ում՝ ապրիլի 30-ը, իսկ

¹ Տե՛ս Архив внешней политики России, ф. Сношения России с Арменией, 1721 (այսուհետև՝ АՅՔՐ, որի տվյալները կնշվեն բնագրին կից), Ժ. Գ—5, լ. 4, 64, 70.

² Տե՛ս Եղիա Կարենցու գիվանը, առաջաբանը և ծանոթագրությունները Ա. Գ. Աբրահամյանի, Երևան, 1968, № 88, 89, 90, АՅՔՐ, Ժ. Ա—14, լ. 36 և օճ, 42 և օճ.

³ Լ. Ոսկյան, Եղիա Աստուածատուրյան Մուշեղյան և իր գրական արտադրությունները, Վիեննա, 1927, էջ 2.

իրականում՝ ապրիլի 15-ը, որի մասին մի քանի հիշատակություն ենք գտնում դիվանում, ինչպես. «Ցերկրաշարժն եղև յամի տեառն 1721 ապրիլի 15» (АВПР, д.В—5, л. 14), «...ապրիլի 15 օրն շափաթ արև ծագածէն յետ երկու սահաթ սաստիք շարժեցաւ և բլաւ քաղաքն...»⁴ և այլն:

Բ. Զուգասգլանն իրավացիորեն առավել արժեքավոր է համարում բառարանի հայերեն բացատրական հատվածը, մասնավորապես արձանագրելով, որ «Մուշեղյանի բառարանում հանդիպում են շուրջ 70 հայերեն նոր բառարարություններ» (էջ 24): Մենք ձեռնպահ ենք մնում այստեղ լեզվաբանական խնդիրների շուրջ ծավալվելուց, թողնելով դա մասնագետներին, սակայն չենք կարող մեր տարակուսանքը չհայտնել աշխատասիրողի այն եզրահանգման առթիվ, որը վերաբերում է փոխառյալ բառերին: Եթե միանգամայն ընդունելի է հրատարակչի այն միտքը, թե Եղիա Մուշեղյանի բառարանը «գաղափար է տալիս XVIII դ. առաջին տասնամյակներում հայ արհեստավորական-առևտրական շրջանակների հայերեն լեզվի վիճակի մասին» (էջ 31), ապա վիճարկման տեղիք է տալիս այն պնդումը, թե սույն բառարանը, որի հայերեն բացատրական հատվածի բառապաշարը «հարուստ է հայերեն բառարաններին անծանոթ բազմաթիվ բարբառային և նորաստեղծ բառերով, ինչպես նաև... փոխառություններով» (էջ 23), «112 նոր բառերով... հարստացնում է հայերեն բառապաշարը» (էջ 31), «հետևաբար այդ փոխառյալ բառերը պետք է արտացոլվեն մեր արմատական ու բացատրական բառարաններում» (էջ 24): Առևտրական միջավայրում, անտարակույս, խառնվում են տարբեր երկրների ու ժողովուրդների հոգևոր արժեքները, նաև լեզուները. սակայն անհերքելի իրողություն է, որ այդ միջավայրում յուրաքանչյուր բառ չէ, որ խաչմերուկով անցնելու պահին գործածական լինելով, ենթակա է հետագայում վերածվելու փոխառության: Մուշեղյանի բառարանից բերված շատ օրինակներ, որոնք աշխատասիրողի կողմից դիտված են իբրև փոխառություններ (ճահտ, ճուպա, մատխապ, շապաքա, շուրում, մուճալա, փերթիդ, քալլափոշ և այլն (էջ 27, 28), հայերենում քաղաքացիություն չեն ստացել և եթե Մուշեղյանի ժամանակ գործածական են եղել, ապա միայն իբրև օտարաբանություն: Զպետք է անտեսել, որ փոխառություններն ըստ արժեքի համազոր չեն. դրանց այն մասը, որը դուրս չի գալիս դիպվածային շերտից, ժամանակի ընթացքում քննություն չի բռնում, կենսունակություն չի ցուցաբերում և կարևոր դեր չի խաղում փոխառու լեզվում, համարվում է պատահական, դիպվածային: Եվ պատահական չէ, որ աշխատասիրողի նշած «112 նոր բառերը» մեր բառարաններում գրանցված չեն: Համեմատության համար հիշենք, օրինակ՝ ասպարեզ, սիրամարգ, վազր, ասպանդակ, ճրագ, փիղ, կաղամբ, ածղահա, նոճի, վարդ, ապակի, աշափերտ, երիտասարդ, հարազատ և բազում այլ բառեր, որոնք փոխառյալ լինելով, անքակտելիորեն մտել են հայոց լեզվի բառապաշարի մեջ, մերվել նրան, դարձել հարազատ ու մայրենի:

Մուշեղյանի բառարանում որոշ թուրքերեն բառեր տրված են առանց համապատասխան համարժեքի: Բ. Զուգասգլանը դրանք լրացրել է անհրաժեշտ բացատրություններով, դրանով իսկ շտկելով բառարանի թերություններից մեկը, որի պատճառը, ըստ աշխատասիրողի, այն է, որ «տվյալ թուրքերեն բառը Մուշեղյանի միջավայրում գործածական է եղել և հանրածանոթ» (էջ 32): Կարծում ենք, այս մեկնաբանությունը պատշաճում է այն դեպքերին, երբ Մուշեղյանը թուրքերենի դիմաց իբրև բացատրություն կրկնում է նույն թուրքերեն բառը (մուլք, մինտար, նաճախ, թազի, մըխ և այլն): Իսկ այն դեպքերում, երբ բառի դիմաց բաց է մնացել, կարծում ենք, պարզապես, չի գտնվել համապատասխան ստույգ համարժեքը, որը, թերևս, արվելու էր բառարանի կազմման հետագա փուլում: Հավանաբար, նշված կարծիքից էլ բխում է աշխատասիրողի լրացումների ոճը, որոնք, իբրև կանոն, սկսվում են թուրքերեն բառի անհարկի կրկնությամբ, «վերականգնմամբ» (էջ 32): Կարիք կա՞ր, արդյոք, այդպիսի վերականգնման. մանավանդ, որ միշտ չէ, որ վերականգնված թուրքերեն բառին հետևում է հայերեն բացատրությունը (դանթար-դանթար, դաֆաս-դաֆաս). նման դեպքերում դրանց բացատրությունը պետք է փնտրել «Բառաքնական դիտողություններ» բաժնում:

Բառարանում թուրքերեն որոշ բառեր կրկնակի, երբեմն եռակի են բացատրված. այդ մասին աշխատասիրողը տողատակում նշում է, և դա կարևոր է, քանի որ կրկնված բառերը մեծ մասամբ տարբեր երանգներով են բացատրված: Բայց և կան ոչ սակավ կրկնված բառեր, որոնց վերաբերյալ նշումը բացակայում է [օրինակ՝ փաճճառ (Փ—1, Փ—25, Փ—36)].

⁴ Եղիա Կարենցու դիվանը, էջ 101:

«Իրամ (Ս—17, Ս—70), ղաֆա (Ջ—16, Ջ—23), պարիշ (Պ—27, Պ—28), հաբամի (Հ—3, Հ—44), հաբամ (Հ—34, Հ—65) և այլն], ուստի և ընթերցողն անհաղորդ կմնա այդ բառերի իմաստային ներբերանգներին:

Հրատարակությունը զերծ չէ այնպիսի վրիպակներից. որոնք կարող են շփոթություն հասցնել բառերի բացատրության մեջ: Օրինակ, արևելյան լեզուների իմացությունը միայն կհուշի, որ ամանաթ (Ա—32) պետք է լինի ամառաթ: Կան «հանելուկներ». ինչպես՝ հաբամ (հապորինի, անարդար, պիղծ, անիրավ) կրկնված բառի՝ 'րկորդ (Հ—65) բացատրությունը՝ «եռիւրդ», որին կից հրատարակչի բացատրությունն է՝ «իմա նուիրական». Կամ՝ շաբաթ-շաբաթ (Չ—62) — շաբաթ (էջ 149) նույն բառի տարբերակներն են, թե՛ վրիպակ կա:

Տողատակի այն հղումները, որոնք վերաբերում են Եղիայի դիվանին, թերի են (բացառությամբ մեկի), ուստի և չեն կարող լիարժեք ուղեցույց լինել, քանի որ դիվանի թղթապանակների թվահամարները տրված են առանց կապոցների տառային անվանումների («Ա», «Բ», «Գ» և այլն), որոնցից յուրաքանչյուրը թղթապանակների առանձին համարակալում ունի:

Սույն հրատարակության ամենացավալի բացթողումը, թերևս, այն է, որ հրատարակիչը չտկում չի մտքրել Եղիա Մուշեղյանի բառարանի այբբենական հերթականության մեջ, որին ենթարկված են բառերի միայն սկզբնատառերը. հաջորդ տառերի հերթականության բացակայության պատճառով յուրաքանչյուր բառ դտնելու համար պետք է ամբողջությամբ աչքի անցկացնել տվյալ սկզբնատառով բառերի ցանկը, որովհետև զամիւն-ը ոչ թե նախորդում, այլ հաջորդում է զիան-ին, էլլի-ն՝ էլիզ-ին: Դա մեծապես նվազեցնում է բառարանի «օգտակար գործողության գործակիցը», որը ներկա դեպքում հակադարձ համեմատական է տվյալ սկզբնատառով բառերի քանակին: Հասկանալի է այս հարցում աշխատասիրողի գրական միտումը՝ հարազատ մնալու բնագրին: Սակայն այստեղ, կարծում ենք, միանգամայն անհրաժեշտ էր միջամտությունը՝ ի շահ ընթերցողի:

Հարկ ենք համարում շեշտել, որ արված նկատառումները, որոնք թելադրված են լոկ հրատարակությունն առավել կատարյալ տեսնելու ցանկությամբ, ամենևին չեն խաթարում այն դիտական արժեքը, որ ներկայացնում է Բ. Չուգասղյանի սույն աշխատասիրությունը:

Լ. Գ. ԳԱՆԵՂՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու